

վարդապետին (1), որոնք ինչ խաղեր ասես՝ որ չեն կատարել «կղղիացած» Նախավկայի վանքում, խուլ ձորի մէջ եւ Դարաշամբում, որ աշխարհէ անյայտ խաւարի . . . ՚ի վերջոյ ցանկութիւն յայտնեցի այցելել Դարաշամբի եկեղեցուն։ Փոքրիկ, նեղ եւ անդուռն քարէ ծակսից հազիւ կարողացայ մի քանի գիւղացիների հետ ներս մտնել այնտեղ։ Ի՞նչ եկեղեցի . մի անզանգակատուն խարխուլ անկիւն, փայտէ, կիսաքանդքեմ, այնտեղ մի քանի հնամաշ գզզզուած աւետարաններ, սաղմոսներ՝ թռղի, ցեցի մէջ կորած, մի կողմը ոչխարի հօտը նսած որոճալիս, միւս կողմը պծած անասունների կերակուրը — դարմանայարդ։ ծղնոցներ . . . մի խօսքով դժոխք կարծեցի, դուրս եկայ իսկոյն եւ խելազարութիւնից չը գիտէի ինչ անել։ — «Տարէ՛ք ինձ Նախավկայի վանքը», — համբերութիւնից դուրս գալով խնդրեցի կանդնած գիւղացիներին։ Ծեր Մանուկի հետ երկու բարձրահասակ գիւղացի ինձ առաջնորդեցին դէպի վանքը . . .

ԴՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

## ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՔ ԵՒ ԱՄԱՆՈՎ ԹԱՆ

Կարնոյ լեռնադաշտին մէջ երկու ուղեւորք ճամբորդելով՝ կը հասնին գեղացւոյ մը արտն։ այս վերջինս ՚ի նշան հիւրասիրութեան ամանով թան կը դնէ առջեւնին։ Եւ որովհետեւ միա՛լ մէկ դգալ պատրաստունէր, վէճ կը ծագի թէ ո՛վ պիտի սկսի նախ ճաշակել այն թանէն։ Իսկոյն միաձայն հաւանութեամբ կ'որոշեն որ՝ ով որ կարենայ ափ յափոյ ոտանաւորով մը նոյն դաշտին վրայ եղած գիւղերէն գոնէ տասներկուքն յիշել, պիտի գործածէ միակ դգալն եւ թանէն վայելէ։ Յանկարծիրենց մէջէն ամենէն չարաճճին հետեւեալ յանդաւոր առղերն հիւսեց։

Ահա՛ դիմացդ կաղտառիճ,  
Կէզ եւ Դըմիկ, Սընկառիճ,  
Էրչիկ, Փըրչիկ, Էմրէճիկ,  
Ճինիս, Բըրդոնք, Դէվրիզճիկ,  
Նաեւ Աղուէր, Աղաւեր.  
Պարո՛ն դըգալն ասդին բե՛ր։

Զայս ըսելով թանն ամբողջովին լափեց լմնցուց։

Յ. Վ.

Առիւծեանցը առարկել է. «Ես չեմ գալ, փող քիչ էք տալիս, ժամ ասեւիս ձեր սիրուն կանայք չեն դալիս, այլ միայն տղամարդիկ . . .»

(1) Սա գործել է յայտնի զեղծումներ Նախավկայի վանքում, որտեղից մի անգամ կաթողիկոսի հրահանգով կանչուեցաւ էջմիածին քննութեան համար։